ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Հակոբ Արշակյանին
Պետրոսյան Սոնայից

Արագածոտնի մարզ, քաղաք Թալին, Տերյան 24, բն. 13

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պրն. Հակոբ Արշակյան

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ եւ 51-րդ հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

Արագածոտնի մարզի միջհամայնքային ճանապարհները վերանորոգվելու՞ են 2019 թվականի ընթացքում, և որքա՞ն գումար է նախատեսվում ծախսել այդ նպատակով:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

Սոնա Պետրոսյան

16. 05. 2019